ԼՂՀ ագրովերամշակող արդյունաբերությունը դեռևս խորհրդային շրջանից սկսած և այժմ էլ համարվում է երկրի տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը:

Նոր արտադրահարաբերություններին անցնելը, ինչպես նաև արցախյան հակամարտությունն իրենց ազդեցությունն են թողել ԼՂՀ ագրովերամշակման ոլորտի վրա: Հետպատերազմյան տարիներին զգալիորեն նվազել են գյուղմթերքների վերամշակման արտադրական հզորությունների օգտագործման մակարդակը և արտադրության ծավալները: Սակայն, վերջին տարիներին լրացուցիչ ներդրումների և արտադրանքի մրցակցության բարձրացման շնորհիվ, որոշակիորեն բարելավվել է այս համակարգի վիճակը: Բավական է նշել, որ վերջին հինգ տարիների միջին տվյալներով սննդամթերքի (ներառյալ խմիչքները) արտադրությունն ապահովել է մշակող արդյունաբերության 63.3, իսկ ամբողջ արդյունաբերության՝ 24.4 տոկոսը:

Ներկայումս հանրապետության գյուղատնտեսական մթերքների վերամշակման բնագավառը ներառում է պտուղ-բանջարեղենի, խաղողի, կաթի, մսի վերամշակման ճյուղերը, ինչպես նաև՝ ալյուրի, ձավարեղենի, բուսական յուղի և այլ արտադրությունները:

Հարկ է նշել, որ վերամշակող ընկերություններն արտադրության ծավալների ավելացման մեծ պոտենցիալ են պարունակում, քանի որ այսօրվա դրությամբ օգտագործվում են առկա արտադրական հզորությունների 45-50 տոկոսը:

Արտադրանքը հիմնականում ուղղված է ներքին պահանջարկի բավարարմանը: Սակայն, արտադրական հզորությունների ընդլայնման, տեսականու մեծացման ու արտադրանքի մրցունակության բարձրացման շնորհիվ հնարավոր է ոչ միայն ներմուծվող շատ պարենամթերքներ փոխարինել տեղական արտադրանքով, այլև՝ նախադրյալներ ստեղծել արտահանման ուղղվածություն ունեցող գյուղատնտեսության զարգացման համար:

Ինչպես երևում է ստորև ներկայացված աղյուսակից, 2013 թվականին հանրապետությունում, նախորդ տարվա համեմատ, 10.1 տոկոսով նվազել է օղու արտադրության ծավալը, իսկ գինու, կոնյակի և ոչ ալկոհոլային ըմպելիքների արտադրության ծավալներն ավելացել, համապատասխանաբար՝ 1.5 տոկոսով, 4.7 անգամ և 25.8 տոկոսով:

2012 թվականի համեմատությամբ, 2013 թվականին ավելացել են նաև մի շարք կաթնամթերքների, ինչպես նաև՝ մսի, ալյուրի ու բուսական յուղի արտադրության ծավալները, ընդ որում, կարագի և պանրի արտադրական ցուցանիշները գերազանցել են նախորդ տարվա մակարդակը, համապատասխանաբար, 20.5 և 13.4 տոկոսով, իսկ մսի, ալյուրի և բուսական յուղի ցուցանիշները, համապատասխանաբար՝ 15.4, 12.7 և 54.3 տոկոսով:

2013 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, 26.3 տոկոսով նվազել է մակարոնեղենի, իսկ 2.6 տոկոսով՝ պահածոների արտադրության մակարդակը:

ԱԳՐՈԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

	Չափման միավորը	2012թ.	2013թ.	Աճի տեմպը (տոկոս)
Խաղողի գինի	հազ. լիտր	222.8	226.1	101.5
Օղի	-//-	747.7	672.2	89.9
Կոնյակ	-//-	3.8	18.0	4.7 անգ.
Ոչ ալկոհոլային ըմպելիքներ	-//-	677.0	851.6	125.8
Միս	տոննա	733.4	846.3	115.4
Կարագ գյուղացիական	-//-	22.9	27.6	120.5
Պանիր	-//-	156.9	178.0	113.4
Կաթնաշոռ	-//-	234.3	250.0	106.7
Թթվասեր	-//-	860.3	879.3	102.2
Մածուն	-//-	539.0	606.3	112.5
Ալյուր	-//-	9145.8	10311.6	112.7
Մակարոնեղեն	-//-	176.2	129.8	73.7
Բուսական յուղ	հազ. լիտր	59.3	91.5	154.3
Պահածոներ	մլն դրամ	548.1	533.9	97.4